

ԳԵՂԱՐՈՒԵՍ



ՔԱՆԴԱԿԱԳՈՐԾՈՒԹԻՒՆ

(Տես յէջ 168)

Է. — Քանդակագործարիւնն կամարաղեղնային յեղանակին մէջ. — Ի Գաղղիա, Ի Գերմանիա, յԱնգլիա, յԻտալիա, Ի Հոլանդա և Ի Ռեյզիա :



ՈՅՆ յեղանակիս մէջ ստեղծակա- նութիւնն իւր վերջին զարգացումն կ'ունենայ ամենէն աւելի Ի Գաղղիա : Նորակառոյց մայր եկեղեցիք կը կարօտէին արձանագործութեան զարգարանաց : Գաւթիներու կողմնական մասերն, զրանց պտակներն, կամարակապք և ճակատի եռանկիւնք զարգարուեցան արձանիկներով :

Աս յեղանակի բազմաթիւ ձեռագործներէն՝ որոնք սոյն հոռմանեան պարագայէն Ի կամարաղեղնային անցնելու միջոցը կը կազմեն, կրնանք յիշատակել այն հրաշալի քանդակները, որք կը զարգարեն Ռէյմսի մայր եկեղեցւոյ մեծ զուրը. միանգամայն կ'երեւի, թէ նախորդ պարագայի այն անաչառութեան բնապրոշմն այլ կորսուելով, ոճն այնպիսի բարձրութեան հասած է, որ յիբաի կը յիշեցնէ մեզ հնոց կենդանասիւս և նրբաբուստ ձեռագործները, բայց 'ի մի քանի թերութեանէ շինութեան կերպին : Նմանապէս ուրիշ նշանաւոր ձեռագործներ այլ կը գտուին Պարիսու և Ամիանու մայր եկեղեցեաց մէջ, մանաւանդ Շարդիի մայր եկեղեցւոյ թեւայն մեծ դրան վերայ :

Ե՛րբ դարու մէջ ճարտարապետութիւն և քանդակագործութիւն սերտիւ իրեաց հետ միանալով յառաջ բերին զարմանաբանչ հը նարազէա կարողութիւն և գեղեցկութիւն մի : Մանաւանդ սոյն դարուս երկրորդ կէսն, այս-

ինքն է՝ Սրբոյն Լուչովիկեայ յեղանակն, իւր արտադրութեանց մէջ այնպիսի կատարելութիւն մի ստացաւ, որոնք համարձակ կրնան բաղդատուիլ Պերիկլեան յեղանակի ձեռագործաց հետ : Նոյնպէս ոճոյ մաքրութեան և վեմնութեան կողմանէ այնպիսի գերազանցութիւն մ'ունին սոյն յեղանակիս ձեռագործք, զորս չէ կարելի գտնել միջին դարու մէջ. սակայն, արդէն այս դարուս մէջ, արուեստն սկսաւ նուազիլ ճարտարապետութեան զարարման ժամանակին հետ :

Գերմանիոյ մէջ ընդհակառակն արուեստն կը զարգանար, և այնպիսի արտադրութիւններ յառաջ կը բերէր, որոնք եթէ ոչ վիթխարի սակայն վայելչութեանէ զուրկ չէին, օրինակի համար Ֆրիբուրգի (Ի Ռիսգաւ) մայր եկեղեցւոյ գաւթին մէջ գտուող գեղեցիկ արձաններն. ինչպէս նաեւ Սարապուրգի մայր եկեղեցւոյ ճակատը զարգարող արձանքն : Եթեւ լուս արժանի է նաեւ Նաւթուրգի մայր եկեղեցւոյ մէջ հրաշալի արձաններու շարքն, մանաւանդ արեւմտեան գասին մէջ, ինչպէս նաեւ Բամբերգի մայր եկեղեցւոյնը, և մասնաւորապէս երեք մեծ դռներն և գասի արձանքն : Ե՛րբ դարու մէջ ժողովեցաւ արձանագործութիւնն Ի Գերմանիա : Կոլոնիոյ մայր եկեղեցւոյն մոյթերը զարգարող՝ Գրիստտի, իւր մօր և առաջելոց արձանքն արուեստական մեծ արժէք ունին : Ասկէ զտա մեծ գործունէութիւն մ'այլ բացուեցաւ Ի Նիուրեմբերգ և

շատ սզղեցութիւն ըրաւ արուեստի վրայ : Սրբոյն Լաբենտեայ եկեղեցոյ գաւթին մէջ կը գտուին նշանաւոր քանդակներ : ԺԴ դարու վերջերն շինուեցաւ Չքնազ Աղբիբ (Jolie Fontaine) անուամբ յիշատակարան մի, զարդարուած արձաններով և քանդակներով : Մի և նոյն արժէքով են և ձեռագործը Աստուածածնայ (Notre-Dame) եկեղեցոյ մեծ զրան և տնդաստակին արձանաց :

ԺԵ դարու սկզբէն՝ ի Սուբ (Souabe) շատ զարգացեալ կ'երեւին ստեղծական արուեստը : Չոր օրինակ Եսլինգենի Աստուածածին եկեղեցոյն ընծայուեցան զեղեցիկ արձաններ . անկէ առջ Գմուկի Ս . Խաչ եկեղեցին զարդարուած էր ճոխ քանդակներով :

Այս ժամանակները՝ Անզղիա եւ մասնակցեցաւ արձանագործութիւնը կատարելագործող շարժման, մանաւանդ շիրիմները արձանագարդեղու ժամանակ :

Չուլեւու արուեստն միայն մկրտարաններով և բազմաստեղծ ճրագարաններով չի բաւականացաւ, այլ մասնակցեցաւ նաեւ շիրիմներու զարդագործութեան : Այս տեսակ հրաշալի ձեռագործներէն են Անզղիոյ Հերիկոս Գ. Թագաւորին և Ելէոնորա Թագուհոյն մահարձանն՝ Լոնդրայի Ուէստմինստըր աբբայարանին մէջ . և Սեաւ Իշխանն (le prince Noir)՝ Կանտորբերի մայր եկեղեցոյն մէջ : Գերմանական արտադրութեց մէջ շատ նշանաւոր է Հոնշդաուի Կոնրադ արքեպիսկոպոսին հոյակապ շիրիմն Կոլոնիոյ մայր եկեղեցոյն մէջ :

Բաց ասկէ ի հիւսիսային Գերմանիա, ՚ի Ֆլանտրա և ի Ֆրանկիա կը գտուին անազապունձ բազմաթիւ դամբաններ, որոց վերայ հանգուցելոյն պատկերն քանդակուած է՝ չորս կողմը ճարտարանպետական զարդարանքներով : Այս տեսակ դամբաններու օրինակներ կրնան տեսնուիլ Լիւպէրի մայր եկեղեցոյն մէջ :

Փղոսկրազարդ մասնատուիբրէ զատ կը գտուին նաեւ մետաղեայ քանդակուածներն, որոնք ճոխ զարդարուած աղեղնակամար փոքրիկ եկեղեցոյ մը ձեւն ունին : Գարձնալ կը գտուի նաև մեծ քանակութիւն մի փայտեայ արձաններու, որոնք ԺԴ դարէն սկսեալ խորանները զարդարելու կը ծառայէին,

մանաւանդ ի Գերմանիա . ի մէջ այլոց՝ ներկայիս Շլէզու մայր եկեղեցոյն մէջ կը գտուին Հանս Բլաւմանի շինած արձաններն : Այս խորանի նկարներն ընդհանրապէս ճարտար կերպով նկարուած և սկիզբուած են, յորոց բազմաթիւ կը գտուին այժմ ի Գերմանիա և ի Տիւրու, Այսպիտի է Բլաւբուրէն (Blaubeuren) մեծաստանին զեղեցիկ խորանն : Մոյն պարագայիս վերջերն կ'ապրէր ի Նիւրեմբէրգ ճարտարարուեստ վարպետ մի, այսինքն է Ֆայտ Մոտս :

Իտալիոյ մէջ քանդակագործութիւնն բուրովին ազատ զիրք մի կը զրաւէր ճարտարապետութեան քով : Այս նոր զարգացման զըլխաւորն է Յովհաննէս Պիսանոյ (Pisano, 1240-1345) : Իւր ձեռագործաց մէջ ամենէն լաւագոյնն և ամենաճոխ աշխատութիւն մ'է Արձնոյի մայր եկեղեցոյն աւագ խորանն : Ճիտտոյի ազդեցութեան ներքեւ՝ Անդրէաս Պիսանոյ ճարտար քանդակագործ մ'էր զաւ (1280-1345) : Իւր հրաշակերտ զործն է Փլորենտիոյ մկրտարանին անազապունձ մասն : Ուրիշ վարպետ մ'այլ է Որվանես (Սուարես Կիոնես) . սա ինքն շինած է Փլորենտիոյ Ս . Միքայէլ եկեղեցոյն սուկզոծ աւագ խորանի հրաշալի տապանակն, սր իրր զարդագործութիւն՝ զուցէ աշխարհիս ամենէն նշանաւորն ըլլայ : Քանդակագործութիւնն վիենետիոյ, Նեապոլոյ և Հոմիմայ մէջ զարդագործութիւնն իրր առարկաներ կ'ընտրէր շիրիմներու մարմարոնները : վերոնայի մէջ շատ նշանաւոր կը համարուին Սիալիններներու շիրիմներն : Նոյնպէս նաեւ զարմանաց արձանի շիրիմներն են Պաւլայի մայր եկեղեցոյն մէջ Ս . Աւգոստինեայ շիրիմն, ինչպէս նաեւ Միլանու Ս . Եւստորդ եկեղեցոյն մէջ Ս . Պետրոս մարտիրոսի շիրիմն :

Եւրոպիոյ ուրիշ երկիրներու բազմամամբ Հոլանդա այնքան ճոխ չէ իւր քանդակեղէն արտադրութեանց մէջ, որոյ պատճառն այլ յայտնի է : Այսինքն է, այնպիսի Թագաւորութեան մի մէջ՝ ուր բազմաթիւ եկեղեցիք սանձմանուած են ի պաշտօն նորազանդութեան, կարելի չէ տեսնել անոնց մէջ, ոչ ներքուստ և ոչ արտաքուստ այս կրօնական յիշատակարանները ստեղծական զարդագոր-

ծութեամբ, Ուստի և սոյն երկրիս մէջ ար-
ձանագործութեան անկման անմիջական պատ-
ճառ եղաւ նորազանգութիւնն: Բաց ի այս
զխաւոր պատճառէս, հարկ է գիտնալ նաեւ
որ տեղւոյս խնաւ կլիմայն վաստ ազդեցու-
թիւն կը ներգործէր մարմարիոնի վերայ,
ուսկից որ կը շինեն սոյլորաբար քանդակա-
գործք իրենց արձանները՝ որոնք և բաց-
օթեայ կը մնան: Մեր խօսքին ապացոյց մը
կրնայ ըլլալ Հոռոտերգամի մէջ գտուող Տոլ-
լանսի արձանին խեղճ վիճակն:

Երեւելի մարդկանց յիշատակը պահելու
համար շինուած յիշատակարանք՝ ընդարձակ
ասպարէզ մի կը բանան ստեղծականութեան
մէջ. բայց Հոլանդայի ժողովուրդն՝ ինչպէս
նաեւ ընտանիք, ի ցոյց իրենց երախտագիտու-
թեան՝ ուղջով պատուել երեւելի անձինքը՝
իրենց քաջագործութեանց, սաղանդոյ և մա-
տուցած ծառայութեանց համար, կը կանգնեն
եկեղեցեաց մահարձաններ, որոնք կը պահեն
անոնց անձինքը: Ըստ այսմ շիրմներու մեծ
քանակութիւն մի կը գտուի, որոց շինուածքն
յիբաւի շատ հրաշալի է: ԺԵ և ԺԶ պարուց
մէջ՝ հասարակաց շինուածոց և քաղաքաց
զաներուն զարդագործութիւնն նմանապէս ընդ-
արձակ ասպարէզ մի բացաւ քանդակագոր-
ծութեան: Մարմարեայ կիսաղորիք ամեն ա-
տեն բազմաթիւ եղած են, յորոց և մեծ
քանակութիւն մի կը գտուի Լա Հայի (La
Haye) և ուրիշ թանգարանաց մէջ, Հոլան-
դայի մէջ ի վազուց մշակուեցաւ քանդակա-
գործութիւնն, որոյ ապացոյց մի կը նշմարուի
Ս. Պետրոս առաքելոյն նուիրուած քարի մը
վերայ, որ կը գտուի Եղմննտի արքայական
եկեղեցոյ ճակատին, որոյ հետքիւն կը
հանեն մինչև ցամա 1443: Աւատական յե-
ղանակի ամենէն հին յիշատակարանն. և է
կարմիր կոպէճ քարի վերայ հարթ քանդակ
մի, երեք սուր բարձրութեամբ և վեց լայ-
նութեամբ, որ և կը ներկայացնէ Սրբոյն
Պետրոսի, Հոլանդոյի թիբերի Բ. կոմսի և
իւր Պետրոնիլ մօր պատկերքը:

Բեղգիա եւս շատ նշանաւոր ձեռագործներ
յտառք բերած է արուեստի այս և ուրիշ ճիւ-
ղերուն մէջ. Բաւական է անգամ մը պտը-
տիլ իւր քաղաքները, որոնք արուեստի օւ-

ստմնասիրութեան տեսակիտով այնքան կա-
րեւոր են, այցելել իւր մայր եկեղեցիները,
կանոնիկոսական եկեղեցիները, թանգարան-
ները, համալուելու համար, թէ ըստ քան-
դակագործութեան՝ Եւրոպոյի միւս գաւառնե-
րէն վար չի մնար: Հրաշալի բեմերն, մկրթ-
տութեան աւազանն, տապանակներն, ուր
արուեստն կը թուի ցուցընել բոլոր իւր նա-
խութիւնը կոփածոյ վիժին մէջ, վայելուչ ան-
դրիք, հոյակապ շիրիմք, շքեղաշուք ամպինք
քարոզութեան, չքնադակերտ աթոռք կը լայտ-
նեն, թէ արուեստն կատարելութեան ինչ
ստորիճանին հասեր էր Ստորին-Նահանգաց
մէջ: Այս երկրիս մէջ կանուխկեկ զարգացաւ
նաեւ քանդակագործութիւնն: Վալլոն (Wal-
lonne) նահանգաց պարզներու մէջ ԺԳ դարէ
ի վեր մշակուած էր սոյն արուեստս: Այս-
պէս՝ պղնձեղէն քանակագործութիւնն այս
յեղանակիս մէջ ծաղկեցաւ ի Դինանդ, և
յտառք բերաւ մեծ քանակութիւն մի հարթ
քանդակներով զարդարուած մկրտութեան ա-
ւազաններու, զրակալաց, տապանակաց, աշ-
տանակաց, և այլն, որոնք են ձուլածոյք կամ
քանդակուած և կամ մուրճով ծեծուած, ա-
րուեստի պատմութեան մէջ այլ Դինանդեան
(dinanderie) կը կոչուին: Սոցա հեղինակ-
ներն պարզ և համեստ արուեստաւորներ են,
և կը ճանչցուին batteurs de Dinant
սիբազտով. յորոց մի քանին կարելի է տես-
նել Գաղղոյ եկեղեցեաց կամ թանգարանաց
մէջ. Յիշենք միայն Տրոնդրի եկեղեցոյն մէջ
գտուող զրակալը և աշտանակն. որոց հեղի-
նակն է Դինանդի Յոհան, 1372 թուա-
կանին շինուած Ե:

Կապոյտ քարէ քանդակուած հնազոյն ձե-
ռագործներէն այլ պէտք. ենք յիշատակել
Տուռնէի (Tournay) մայր եկեղեցոյն հիւ-
սիսակողմեան գաւիթը. զարդարող քանդակ-
ները, որոնք կը ներկայացնեն Գաւթի պատ-
մութեան զանազան տեսարանները. ուր կա-
րելի է տեսնել ստեղծական արուեստի ըն-
տիր և նուրբ աշխատութիւն, իւրաքանչիւր
մասանց վերայ խնամով բանուած: Ստորին-
Նահանգաց եկեղեցիներու մէջ կը գտուէին
բազմաթիւ մահարձանք, բայց ժամանակն և
յեզափոխութիւնք անոնցմէ շատերը անյայ-

տացուցին : Բայց յայտնի է , թէ այս քարե-
ղէն շիրիմք մեծ արժէք ունէին և բնիկ ա-
րուեստաւորաց դուրին արգասիք էին :

ԺԳ զարու մէջ ի Տուռնէ կար քանդա-
կազործութեան դպրոց մի , որուն արտադրած
բազմաթիւ ձեռագործքն անշուշտ զամենքը
պիտի զարմացնէին , եթէ զանոնք խորտակած
յիւնէին ԺՁ զարու պատկերամարտը : Յերա-
ւի , կը տեսնենք Brabantի դուքս մի ,
Յովհաննէս Գ . որ մահարձան կանգնել կու
տայ իւր հօրեղբօր Հենրիկոսի յիշատակը
պատուաւրու համար : Լուսինի Ս . Պետրոս ե-
կեղեցոյ մատրանց միոյն մէջ կը գտուի
հիւանաքարէ շիրիմ մի Brabantի դուքս
Հենրիկոսին պատկած արձանով , բարձրաքան-
դակ և լաւ շինուածք , որ անշուշտ ԺԳ
զարու ճարտար արուեստաւորի մը զօրծ է :

Յետագայ զարբերն ամենակարեւոր յեղա-
նակ մի կը կազմեն արուեստի պատմութեան
համար : Չեռագործք կը բազմապատկուին .
յիշենք միայն Ս . Պետրոսի հրաշալի բեմերն
ի Լուսին , և Ս . Գոմմերի ի Լիէր , Ս .
Պետրոսի տապանակները ի Լուսին . խորշե-

րով կոփածոյ քարէ զոթացի աշտարակներ ,
զմբեթարղներ , աշտարակիկներ , կամարա-
կալք , փոքր անդրիք , զարմանահրաշ կերպով
փորուած խումբեր , Հայի եկեղեցոյն մկր-
տարանքն , և եւս Մարիամու Բուրգոն և
Յանգուզն կարողոսի շիրիմն ի Ֆրիւմ (Brug-
ge) , որոնք փորձաբարէ են և սկիզբօծեալ
պղնձով զարդարուած , և յիրաւի հրաշակերտ
իրենց նարտարարուեստ նբութեամբ : Նաեւ
եկեղեցեաց զանձարանք ունին բազմաթիւ
հրաշալի մասնատուփեր և նշխարատուփեր ,
որոնք սկիւրական ձեռագործք են , և շատ
հեղ կը ներկայացնեն կաթողիկէի դրոսի ե-
րեսը հանդերձ իւր գաւիթներով և արձանա-
լից կոր կամարներով , ամպոլյանիներ , աշ-
տարակներ , և զրասանգներով զարդարուած
փոքրիկ զանգակատներ : Այս նբարուեստ
հրաշակերտներու հեղինակներ եղած են ան-
շուշտ տեղացի արուեստաւորքն , որոնք սով-
բութիւն չունենալով ձեռագործաց ներքեւ ի-
րենց անուանքը ստորագրել , անձանօթ կը
մնան մեզ . սոքա կը կոչուէին միայն սկիւ-
րիչք , պատկերակոփք և պատկերագործք :

Շարայարեղի



ԱՍՏՈՒԾՈՅ Է ՇՌՈՎՍ

Տ Ա Ղ

Բնակէ Աստուած
Վերք . Ենեւ-իւ

Գիշեր ի զիէնտոյ սըփուէր ըզքող իւր մըթին :
Մենաւոր , մինչ իւրքն ի քուն կային ի ստուեր զովագին ,
Յաղթականըն պերճացեալ ընդ հանդերձեալ իւր նըսիհ ,
ի սեամբս խորանին իւրոյ հըսկէր անհամբեր ,
Բողոք առ գիշեր ու առ այգն եղեալ լուսաբեր՝

Ձի ծագէր յամբը զօր վաղուի :
« Գիշեր , ծն , ճեպեաց ի ճեմ , զ'ի կպպիտոլ առ վաղիւ .
Յաղթողին Արկոլայ ամբարձցին կառք քալանիւ .
Վաղիւ Հոովմ՝ պարթուցեալ ի չւինդն իմոց արութեանց ,
Հոովմ՝ միայն արժանաւոր փառացբս յարկ մեծալուք
Նաղեսցի պերճապայծառ իւր պանծալի հանդիսիւք ,
Ընդ անցելոյն յաղթանակաց » :